

կուրանան այն ստորագրութիւններուն իրենցը լինելը, եւ կամ կըսեն թէ իրենց յայտնի չէր նամակին մէջ ինչ բան գրուածը. եւ այս պատճառաւ ոչ սակաւ շփոթութիւն կճագի ատենական գործողութեանց եւ կարգագրութեանց մէջ: Այսպիսի անկարգութեան առաջքը առնելու մտքով՝ Առաջնորդական Ատենաս շրջաբերական հրամանագրով պատուիրեց ամենայն Հոգեւոր Կառավարութեանց եւ քահանայից, եւ նոցա ձեռօքը ժողովրդոց Վիճակիս, որ այսուհետեւ այնպիսի բազմաստորագիր նամակները չեն ընդունուիր՝ մինչեւ որ անոնց մէջի ստորագրութիւնները վաւերացած չլինին՝ կամ տեղւոյն քահանայէն եւ կամ քաղաքական իշխանաւորէ կամ պաշտօնատէրէ մը. որով պիտի իմացուի թէ ձեռք գնողները լաւ

հասկըցեր են այն գրուածքին միտքը, եւ անունները իրենք են գրողները կամ գրել տուողները:

— Եւպատորիոյ Արժանապատիւ Նշան քահանայն Տէր-Նշանեան գովելի աշխատասիրութեամբ յօգուտ եւ ի պայծառութիւն իրեն յանձնուած ժողովրդեան, Ս. Նիկողայոս եկեղեցւոյն գաւթին մէկ մասը գեղեցիկ պարտէզ եւ այգի դարձուց ու զարդարեց ծառերով եւ ազնիւ խաղողի որթերով, եւ այս բանիս համար ոչ միայն իւր աշխատանքը չխնայեց, այլ եւ սեպհական ստացուածքէն ծախքեր ըրաւ. ուստի եւ արժանաւոր դատեցաւ եկեղեցական իշխանութեան՝ ինչպէս նաեւ Եւպատորիոյ ժողովրդեան շնորհակալութեանը:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒՅ ՄԱՀՄԷՏԱԿԱՆԱՅ ՀԱՒԱՏԱՅԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ.

Հայաստանեայց սուրբ եկեղեցին զուրկ չէ այն մխիթարութենէն զոր հին ատենը շատ ունեցեր է, այսինքն իւր քրիստոնէական ուղղափառ դաւանանքն ու վսեմ արարողութիւնները տեսնելով՝ իւր գիրկը վազողներ ունենալ երբեմն: Եւ այս բանս արդարեւ մեծ մխիթարութիւն պէտք է համարիլ մեզի՝ քանի որ յիշեմք թէ ատենով որքան Հայ քրիստոնեայք երկիւղ կամ բռնութիւն քաշելով իՊարսից եւ իՏաճկաց, դուրս ընկեր են յազգային եկեղեցւոյ. մինչդեռ այժմ ոչ միայն դադրած են այնպիսի հաւատուրացութիւնները, այլ եւ ոմանք ի մահմէտականաց, եւս եւ ի Հրէից ինքնայորդոր յօժարութեամբ կիսնդրեն ընդունել զիրենք ի ծոց Հայաստանեայց եկեղեցւոյ: — Այս ու-

րախութիւնս ունեցան յատկապէս այս տարի Սիմֆերոփոլի եւ Թէոգոսիոյ բարեպաշտ ժողովուրդները: Սիմֆերոփոլի եկեղեցւոյն մէջ թաթար մահմէտական մը յետ օրինաւոր կրթութեան եւ պատրաստութեան ընդունեցաւ սուրբ մկրտութիւնը Սուրենեան տէր Յակոբ աւագ քահանային ձեռօքը. եւ Թէոգոսիոյ եկեղեցւոյն մէջ՝ Ալի անունով պարսիկ երիտասարդ մը բոլոր մեծ պահոց միջոցին պատրաստուելով՝ եւ քրիստոնէական սուրբ հաւատոյ խորհուրդներն ու վարդապետութիւնները սովորելով, Աւագ հինգշաբթի օրը մկրտուեցաւ փառաւոր հանդիսիւ Գեր. Առաջնորդէն, եւ կոչուեցաւ Յովհաննէս:

